ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 237

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Ռաֆիկ Կառլենի Սիմոնյանի սեփականություն հանդիսացող 1.4 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-00109-0124, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության,

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Ռաֆիկ Կառլենի Սիմոնյանի սեփականություն հանդիսացող 7.56 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-00109-0123, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության,

3. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Մհեր Հայկի Տերտերյանի սեփականություն հանդիսացող 23.61113 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից (ծածկագիրը՝ 10-037-0112-0247, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) առանձնացված 0.867422 հա ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ Խաղողի այգի գործառնական նշանակության,

4. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Մեր Հայկի Տերտերյանի սեփականություն հանդիսացող 40 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից (ծածկագիրը՝ 10-037-0112-0248, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) առանձնացված 3.436899 հա ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ Խաղողի այգի գործառնական նշանակության,

5. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Մեր Հայկի Տերտերյանի սեփականություն հանդիսացող 79.83191 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից (ծածկագիրը՝ 10-036-0104-0292, գործառնական նշանակությունը՝ վարելահող) առանձնացված 16.14997 հա ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ Խաղողի այգի գործառնական նշանակության,

6. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Մեր Հայկի Տերտերյանի սեփականություն հանդիսացող 56.98785 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից (ծածկագիրը՝ 10-037-0112-0253, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) առանձնացված 8.401525 հա ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ Խաղողի այգի գործառնական նշանակության,

7. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Լյովա Հմայակի Սարգսյանի, Արփիկ Հմայակի Սարգսյանի, Զինա Հմայակի Սարգսյանի, Լուսինե Լյովայի Սարգսյանի, Լիլիթ Գաբրիելի Սարգսյանի և Գոհար Վարդանի Սարգսյանի համասեփականություն հանդիսացող 0.391 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0212-0025, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ Խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 238

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18,05,2006թվականի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող (ծածկագիր՝ 10-020-0083-, հողամասի չափը՝ 0.10991հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի վրա ինքնակամ կառուցված մեկ հարկանի կիսանկուղով առանձնատունը՝ 58.22քմ, բաց պատշգամբը՝ 279.53քմ, աստիճանավանդակը՝ 1.35քմ, ընդամենը՝ 139.10քմ, համարել Արենի համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական (կցվում է շինությունների և հողամասի հատակագիծը):
2. Վերը նշված բնակելի տանը տալ հետևյալ հասցեն՝ ՎՁՄ Արենի համայնք, գ. Ելփին 43 փ. տ.25:
3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,

4. Առաջարկել Արենի համայնքի ավագանուն սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցները և 0.10991 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Եղիշ Մնացականյանին, և առաջարկել նրան.

ա) վճարելու 1ք.մ.՝ 1650 ՀՀ դրամ բնակելի տան համար, ընդամենը 229 515 (երկու հարյուր քսանինը հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամ, հաշվի առնելով ՀՀ կառավարության 17.04.2003թվականի թիվ 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

բ) վճարելու 1քմ 222 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան և հարակից կառույցների սպասարկման համար անհրաժեշտ 1000քմ հողամասի համար, ընդամենը՝ 222 000 ՀՀ դրամ,

գ) վճարելու 1քմ 666 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան և հարակից կառույցների սպասարկման համար անհրաժեշտ 1000քմ-ից ավել օգտագործվող 99.1քմ հողամասի համար, ընդամենը՝ 66 000 ՀՀ դրամ,

գ) վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5. Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.10991հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

1. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 239

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՅԿԱԶ ԱՐՏԱՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՐԱՔՍԻ ԼԵՎԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ԱՐՏԱՇ ՀԱՅԿԱԶԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԵԴԱ ՀԱՅԿԱԶԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Հայկազ Արտաշի Կարապետյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Հայկազ Արտաշի Կարապետյանին, Արաքսի Լևիկի Մկրտչյանին, Արտաշ Հայկազի Կարապետյանին և Սեդա Հայկազի Կարապետյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.155 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-0046, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 240

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 19.04.2019թ.-ի թիվ 46 որոշումը, հաշվի առնելով «Արենի համայնքի բնակավայրերում չգործող, հին խողովակաշարերը և ջրագծերը՝ կիսախողովակները ապամոնտաժելու և նրանցով նոր ծրագրեր իրականացնելու համար ստեղծված» հանձնաժողովի 25.09.2020 թվականի թիվ 1 արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արփի բնակավայրում պահեստավորված 100մմ տրամաչափի երկաթյա խողովակներից 36 գծամետր օգտագործել Արենի համայնքի Ելփին բնակավայրում թվով 4 տնամերձ հողամասերի ոռոգման համակարգ կառուցելու և ջրով ապահովելու նպատակով:

2. Արենի ՀՈԱԿ-ի տնօրեն Ս. Սիմոնյանին՝ կազմված նախահաշվի հիման վրա իրականացնել պահանջվող աշխատանքները:

3. Սույն որոշման պահանջների կատարման վերահսկողությունը դնել Արենի համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 241

«ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ ՍԵՐՅՈԺԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՕԳՆԱԿԱՆ ԲԱԳՐԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 27 սեպտեմբերի 2020 թվականի 1586-Ն որշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ընդհանուր զորահավաքը, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետը, «Արենի» ՀՈԱԿ-ի կանոնադրության 6.4 կետի նախավերջին պարբերությունը **որոշում եմ.**

2020 թվականի սեպտեմբերի 28-ից «Արենի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Սերյոժա Սիմոնյանի աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես դնել «Արենի» ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական Բագրատ Ավետիսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 242

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԶԱՎԵՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ, ՍԻՐՈՒՆ ՎԱԼՈՌԴԻ ԱՎԱԳՅԱՆ, ԳԱԳԻԿ ԶԱՎԵՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ, ՍԻԼՎԱ ԶԱՎԵՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԻԱՄ ԶԱՎԵՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.12424 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչներ Զավեն Մերուժանի Ավագյանի, Սիրուն Վալոդի Ավագյանի, Գագիկ Զավենի Ավագյանի, Սիլվա Զավենի Ավագյանի և Մարիամ Զավենի Ավագյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 0.12426 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Զավեն Ավագյանի և նրա ընտանիքի անդամների կողմից ավել օգտագործվող 0.12426 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 243

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 25 ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱՎԱԶԴ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը քննության առնելով 17 սեպտեմբերի 2020 թվականի Արենի համայնքի ղեկավարի թիվ 232 որոշմամբ հարուցված վարչական գործը այն է՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի 25 փողոցում գտնվող Արտավազդ Պախրատուրի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը պարզեց որ.

Արտավազդ Պախրատուրի Ստեփանյանը (Բնակության հասցեն՝ Արենի համայնք, գ.Արենի, 25 Փ.), Արենի համայնքի 25 փողոցում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում, խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինություն, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման և կասեցման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի» 14.09.2020թ. թիվ 8 նիստի թիվ 1 արձանագրության հիման վրա 2020 թվականի սեպտեմբերի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է

վարչական վարույթ: Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտների) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Արտավազդ Պախրատուրի Ստեփանյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Արենի համայնքի ղեկավարի օգնական Ռոման Բաղդասարյանի զեկուցագրի հիման վրա «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և օրինականացման, կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի» կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրի 25 փողոցում գտնվող սեձականության իրավունքով իրեն պատկանող հողատարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 14.09.2020թ. թիվ 8 նիստի թիվ 1 արձանագրությունը:

2. Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտուներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով մշտական հանձնաժողովի թիվ 7 նիստի 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականցված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, հաստատված եմ համարում հետևյալը՝

Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ.Արենի, 25Փ-ի բնակիչ Արտավազդ Պախրատուրի Ստեփանյանի կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրի 25 փողոցում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության, իրականացվել է ինքնակամ շինության շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020թ. սեպտեմբերի 18-ին հրավիրվել է լսում, որին մանակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ առձեռն ծանուցում/ Արտավազ Պախրատուրի Ստեփանյանը:

Վերջինս մասնակցելով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ երկար տարներ ապրել է ՌԴ-ում և տեղյակ չի եղել ոլորտը կարգավորող օրենքներից և պատրաստակամ է վճարել սահմանված տուգանքը:

Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քաղաքացին և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և

շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:

Տվյալ պարագայում Արտավազդ Պախրատուրի Ստեփանյանը (բնակության հասցեն՝ Արենի համայնք, գ. Արենի, 25Փ.,) Արենի համայնքի Արենի բնակավայրի 25 փողոցում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ իրականացրել է ապօրինի՝ ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածով 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Արտավազ Պախրատուրի Ստեփանյանի նկատմամբ նշանակել տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի 25 փողոցում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066
3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր

կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 244

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՐԱՆՈՒՇ ՍԻՄՈՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ,ԷՄՄԱ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ,ԱՐԱՄ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.0015 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Հրանուշ Սիմոնի Ղազարյանին, Էմմա Ֆրունզիկի Ղազարյանին, Արամ Ֆրունզիկի Ղազարյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.0015 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0003-0047) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 6 փողոց 6 փակուղի 5, նախկինում տրված գ. Աղավնաձոր 32 փողոց 18 հասցեի փոխարեն՝ ըստ Աղավնաձոր բնակավայրի հասցեավորման քարտեզի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 245

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու, Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի 25. 09. 2020թ. թիվ 13 նիստի թիվ 1 որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1.Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից, Արենի համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝

h/h	Անուն, ազգանուն	Դրամական օգնության չափը /հազար ՀՀ դրամ/	Բնակավայր
1.	Հրանուշ Պողոսյան	20	Խաչիկ
2.	Կարինե Բաղալյան	30	Խաչիկ
3.	Լեռնիկ Սահակյան	20	Ելփին
4.	Արմեն Սմբատյան	20	Ելփին
5.	Սերգեյ Գրիգորյան	10	Ելփին
6.	Աստղիկ Վարդանյան	30	Արփի
		Ընդամենը 130	

2. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նորածին երեխա ունեցող Լիլիթ Միքայելյանին, Կարինե Սահակյանին, Սյուզի Խաչատրյանին, հանգուցյալ Մեհրանուշ Ստեփանյանի ընտանիքին, համաձայն ավագանու 27. 02. 2019 թվականի N19-րդ որոշման 19-րդ կետի, տալ միանվագ դրամական օգնություն՝ 50 000 ՀՀ դրամի չափով:

3. Թույլատրել Արենի համայնքի Արենի բնակավայրի սոցիալապես անապահով բնակիչ Մարինե Ասատրյանին, Նորա Համբարձումյանին, Արմինե Ղարախանյանին, Արփի բնակավայրի բնակիչ Մայիս Հովհաննիսյանին, Նեկտար Մարտիրոսյանին կատարել չորացած ծառերի հատում՝ 3 խմ-ից ոչ ավել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ